

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների արտաքին սահմաններում սահմանային անվտանգության սպառնալիքներին արագ արձագանքելու համար սահմանապահ գերատեսչությունների մասնագետների (փորձագետների) համատեղ խմբերի ձևավորման եւ կիրառման կարգի մասին

Պաշտոնապես

հաստատված

տեքստ

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների արտաքին սահմաններում սահմանային անվտանգության սպառնալիքներին արագ արձագանքելու համար սահմանապահ գերատեսչությունների մասնագետների (փորձագետների) համատեղ խմբերի ձեւավորման եւ կիրառման կարգի մասին**

Սույն համաձայնագրի մասնակից հանդիսացող՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով այն վտանգը, որը Կողմերի կենսական կարեւորագույն շահերին ներկայացնում են ժամանակակից մարտահրավերները եւ ազգային անվտանգության սպառնալիքները,

ընդունելով Կողմերի արտաքին սահմանների սահմանային անվտանգության եւ համատեղ պաշտպանության ոլորտում համագործակցության նորմատիվային իրավական բազայի կատարելագործման անհրաժեշտությունը,

մտադրություն ունենալով խորացնելու համագործակցությունը համաձայնեցված սահմանային քաղաքականության իրականացման գործում,

ղեկավարվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով,

հիմնվելով միջազգային այն պայմանագրերի դրույթների վրա, որոնց մասնակից են Կողմերը,

**համաձայնեցին ներքոհիշյալի մասին.**

## Հոդված 1

Սույն համաձայնագրի նպատակներով գործածվում են հետևյալ եզրույթները՝

«**Կողմերի արտաքին սահմաններ**»՝ սույն համաձայնագրի մասնակից հանդիսացող՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ Անկախ պետությունների համագործակցության մեջ չմտնող պետությունների հետ պետական սահմանների հատվածներ.

«**հարցվող Կողմ**»՝ Կողմ, որին Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի համակարգող ծառայության (այսուհետ՝ Համակարգող ծառայություն) միջոցով դիմում է հարցնող Կողմը՝ հարցնող Կողմի արտաքին սահմանին սահմանային անվտանգության սպառնալիքներին արագ արձագանքելու համար սահմանապահ գերատեսչությունների մասնագետների (փորձագետների) համատեղ խմբերի ձեւավորման եւ կիրառման մասին հարցմամբ.

«**հարցնող Կողմ**»՝ Կողմ, որը Համակարգող ծառայության միջոցով դիմում է հարցվող Կողմին՝ հարցնող Կողմի արտաքին սահմանին սահմանային անվտանգության սպառնալիքներին արագ արձագանքելու համար սահմանապահ գերատեսչությունների մասնագետների (փորձագետների) համատեղ խմբերի ձեւավորման եւ կիրառման մասին հարցմամբ.

«**իրավասու մարմիններ**»՝ Կողմերի պետական իշխանության մարմիններ, որոնք լիազորված են լուծելու սույն համաձայնագրի իրագործման հետ կապված հարցերը.

«**սահմանային անվտանգություն**»՝ պետական սահմանին անձի, հասարակության եւ Կողմի քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, մարդասիրական եւ այլ շահերի պաշտպանվածության վիճակ, որն ապահովվում է պետական սահմանի պաշտպանության իրականացման, պետական սահմանի անցման կետերի գործունեության, մերձսահմանային տարածքների սահմաններում իրավախախտումների կանխարգելման եւ կանխման միջոցով.

«համատեղ խումբ»՝ Կողմերի սահմանապահ գերատեսչությունների մասնագետների (փորձագետների) եւ Համակարգող ծառայության ներկայացուցիչների խումբ, որը, հարցվող Կողմերի իրավասու մարմինների հետ համաձայնեցմամբ, ստեղծվել է Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի որոշմամբ՝ հարցնող Կողմի արտաքին սահմանին սահմանային անվտանգության սպառնալիքներին արագ արձագանքելու համար:

## **Հոդված 2**

Սույն համաձայնագրի նպատակը հարցնող Կողմի տարածքում համատեղ խմբի ձեւավորման, կիրառման եւ գործունեության դադարեցման կարգի, ինչպես նաեւ դրա կարգավիճակի սահմանումն է:

## **Հոդված 3**

1. Հարցնող Կողմի տարածքում համատեղ խմբի ձեւավորման, կիրառման եւ գործունեության դադարեցման, ինչպես նաեւ կարգավիճակի իրավական հիմքն են կազմում սույն համաձայնագիրը, այլ միջազգային պայմանագրեր, որոնց մասնակիցներն են Կողմերը, եւ Կողմերի օրենսդրությունը:

2. Համատեղ խումբը Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի՝ հարցնող Կողմի արտաքին սահմանին սահմանային անվտանգության ապահովման մասով իրավասու մարմինների համագործակցության ոլորտում ժամանակավոր աշխատանքային մարմին է:

#### **Հոդված 4**

Համատեղ խմբի հիմնական խնդիրներն են՝

ա) հարցնող Կողմի արտաքին սահմանին սահմանային անվտանգության ապահովման մասով գործնական օգնության տրամադրումը.

բ) հարցնող Կողմի արտաքին սահմանին տիրող իրավիճակի մասին տեղեկատվության հավաքումը, սահմանային անվտանգության սպառնալիքների վերլուծությունը եւ հարցնող Կողմի իրավասու մարմնին ժամանակին այդ մասին հայտնելը՝ հայտնաբերված սպառնալիքների հնարավոր հետեւանքները կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու համար.

գ) հարցնող Կողմի իրավասու մարմնի՝ հարցնող Կողմի արտաքին սահմանին սահմանային անվտանգության ամրացման մասով միջոցառումների անցկացման մասին հարցման օպերատիվ կատարումը.

դ) հարցնող Կողմի իրավասու մարմնի հետ փոխգործակցության պահպանումը:

#### **Հոդված 5**

1. Սույն համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը համագործակցում են Համակարգող ծառայության միջոցով:

2. Կողմերն որոշում են իրենց իրավասու մարմինների ցանկը եւ այն փոխանցում են ավանդապահին՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին ծանուցումը կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու ժամանակ:

3. Իրավասու մարմինների ցանկում փոփոխության մասին յուրաքանչյուր Կողմ մեկամսյա ժամկետում գրավոր հայտնում է ավանդապահին, որը Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդին ծանուցում է իրավասու մարմինների ցանկի եւ դրանց փոփոխությունների մասին:

## Հոդված 6

1. Համատեղ խմբի ձեւավորման եւ կազմի մասին որոշումն ընդունվում է Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի կողմից՝ հարցվող Կողմերի իրավասու մարմինների հետ համաձայնեցմամբ:
2. Իրավասու մարմինները, Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան, համատեղ խմբի կազմի համար հատկացնում են անհրաժեշտ մասնագետների (փորձագետների):
3. Հարցվող Կողմերի իրավասու մարմիններն իրավունք ունեն որոշում ընդունել համատեղ խմբի կազմի մեջ մտնող մասնագետների (փորձագետների) փոխարինման (հետկանչի) մասին, ինչի վերաբերյալ Համակարգող ծառայության միջոցով տեղեկացնում են հարցնող Կողմի իրավասու մարմնին:

## Հոդված 7

1. Համատեղ խմբի ձեւավորման անհրաժեշտության մասին առաջարկությունը ձեւակերպվում է հարցումով, որը հարցնող Կողմի իրավասու մարմինների կողմից Համակարգող ծառայության միջոցով ուղարկվում է հարցվող Կողմերի իրավասու մարմիններ: Հարցումը պետք է պարունակի հետեւյալ տվյալները՝
  - ա) հարցնող Կողմի իրավասու մարմնի անվանումը.
  - բ) հարցնող Կողմի արտաքին սահմանին սահմանային անվտանգության սպառնալիքի նկարագրությունը.
  - գ) համատեղ խմբի ձեւավորման եւ կիրառման անհրաժեշտության հիմնավորումը.
  - դ) ենթադրվող առաջադրանքների եւ միջոցառումների ցանկը, որոնք պետք է կատարի համատեղ խումբը հարցնող Կողմի արտաքին սահմանի

հատվածում, ինչպես նաև համատեղ խմբի գործունեության մոտավոր ժամկետները.

ե) տեղեկատվություն՝ մասնագետների (փորձագետների), տեխնիկական եւ այլ միջոցների պահանջարկի վերաբերյալ.

զ) հարցումն ստանալու եւ դրա բովանդակության, ինչպես նաև դրա կատարման ընթացքում ստացված տեղեկությունների գաղտնիության ապահովման անհրաժեշտությունը, եթե հարցնող Կողմի իրավասու մարմինն անցանկալի է համարում դրանց բովանդակության հրապարակումը.

է) կոնտակտային հեռախոսները եւ կապի մյուս ուղիները, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել հարցումը կատարելու համար:

2. Հարցումն ուղարկվում է գրավոր՝ պաշտոնական ձեւաթղթի վրա, ստորագրվում է հարցնող Կողմի իրավասու մարմնի ղեկավարի կողմից:

Հարցումը կարող է ուղարկվել (երեք օրվա ընթացքում բնօրինակը միաժամանակ ուղարկելու դեպքում)՝

ա) ծածկահեռագրով.

բ) էլեկտրոնային եղանակով՝ տվյալների փոխանցման մայրուղային ցանցի միջոցով.

գ) տվյալների փոխանցման այլ պաշտպանված տեխնիկական միջոցների կիրառմամբ:

## **Հոդված 8**

1. Հարցումն ստանալիս Համակարգող ծառայությունը կազմակերպում է հարցվող Կողմերի իրավասու մարմինների հետ համատեղ խմբի ձեւավորման

մասին հարցի համաձայնեցում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, անցկացնում է Կողմերի մասնագետների (փորձագետների) տեղաշարժի (տարանցման) երթուղիների, տեխնիկական եւ այլ միջոցների համաձայնեցում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համապատասխան իրավասու մարմինների հետ:

2. Հարցումն ստանալուց հետո հարցվող Կողմերի իրավասու մարմինները 3 օրվա ընթացքում տեղեկացնում են Համակարգող ծառայությանը՝ համատեղ խմբի ձեւավորման, սահմանապահ գերատեսչությունների մասնագետների (փորձագետների) քանակի, նրանց մասնագիտացման եւ հատկացվող տեխնիկական ու այլ միջոցների վերաբերյալ իրենց որոշման մասին:

Հարցվող Կողմերի իրավասու մարմիններից համապատասխան տեղեկատվություն ստանալիս Համակարգող ծառայությունը Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի քննարկմանն է ներկայացնում համատեղ խմբի ձեւավորման, կազմի, դրա ձեւավորման ժամկետների, գործունեության կիրառման եւ դադարեցման մասին որոշում ընդունելու մասին առաջարկությունը:

3. Համակարգող ծառայությունը համատեղ խմբի ձեւավորման մասին հարցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում գրավոր ծանուցում է հարցնող Կողմի իրավասու մարմնին Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի ընդունված որոշման մասին:

## **Հոդված 9**

1. Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի որոշմամբ համատեղ խմբի ղեկավար է նշանակվում Համակարգող ծառայության նախագահի տեղակալներից մեկը:

Համատեղ խմբի ղեկավարը պատասխանատու է՝



ա) համատեղ խմբի գործունեությունը պլանավորելու եւ կազմակերպելու համար.

բ) հարցնող Կողմի իրավասու մարմնի հետ փոխգործակցություն պահպանելու համար.

գ) Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդին համատեղ խմբի կողմից անցկացված միջոցառումների արդյունքների մասին տեղեկացնելու համար.

դ) համատեղ խմբի գործունեության հետ կապված մյուս հարցերի լուծման համար:

2. Համատեղ խմբի ղեկավարը համակարգում է համատեղ խմբի գործունեությունը հարցնող Կողմի իրավասու մարմնի ղեկավարի հետ:

### **Հոդված 10**

1. Համատեղ խմբի ղեկավարը հարցնող Կողմի իրավասու մարմնի հետ համագործակցությամբ մշակում է համատեղ խմբի գործողությունների պլանը (այսուհետ՝ Պլան), որը հաստատվում է հարցնող Կողմի իրավասու մարմնի ղեկավարի կողմից՝ համատեղ խմբի ձեւավորման մասին Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի կողմից որոշում ընդունվելուց հետո 10 օրվանից ոչ ուշ:

Պլանը պարունակում է՝

ա) համատեղ խմբի նպատակները եւ խնդիրները.

բ) ներգրավվող ուժերը եւ միջոցները.

գ) իրավասու մարմնի, հարցնող Կողմի պետական իշխանության գերատեսչությունների ներկայացուցիչների հետ փոխգործակցության կարգը.

դ) համատեղ խմբի ժամանման (մեկնման) եւ գործունեության կարգը.

- ե) համատեղ խմբի գործունեության ժամանակահատվածը.
- զ) համատեղ խմբի գործունեությունը կանոնակարգող հրահանգները.
- է) համատեղ խմբի գործունեության մասին տեղեկացման կարգը.
- ը) համատեղ խմբի անվտանգությունն ապահովող միջոցառումները:

2. Պլանի պատճենն ուղարկվում է Կողմերի իրավասու այն մարմիններ, որոնք ուղարկել են իրենց մասնագետներին (փորձագետներին) համատեղ խմբի կազմ, եւ Համակարգող ծառայություն:

- 3. Համատեղ խումբը գործում է Պլանին համապատասխան:

### **Հոդված 11**

1. Մասնագետների (փորձագետների)՝ կիրառման շրջան մեկնելու եւ վերադարձի, սահմանված նորմերի սահմաններում իրեղեն գույքի ապահովման հետ կապված ծախսերը կրում են իրենց մասնագետներին (փորձագետներին) համատեղ խմբի կազմ ուղարկած Կողմերի իրավասու մարմինները:

2. Համատեղ խմբի մասնագետների (փորձագետների) տեղավորման, նրանց սննդի, բժշկական սպասարկման, տրանսպորտի եւ կապի, այդ թվում՝ հատուկ կապի ապահովման հետ կապված ծախսերը կրում է հարցնող Կողմի իրավասու մարմինը:

### **Հոդված 12**

1. Համատեղ խմբի մասնագետների (փորձագետների) կողմից պետական սահմանը հատելն իրականացվում է առաջնահերթության կարգով:

2. Պետական սահմանը հատելիս համատեղ խմբի կողմից օգտագործվող տեխնիկական եւ այլ միջոցներ Կողմերն ազատում են մաքսային վճարներից ու

այլ վճարներից եւ ենթակա չեն առգրավման ու բռնագրավման՝ Կողմերի տարածքում գործող օրենսդրությանը համապատասխան:

3. Համատեղ խմբի կողմից օգտագործվող տեխնիկական եւ այլ միջոցների տեղափոխումը Կողմերի պետական (մաքսային) սահմաններով, ինչպես նաեւ Կողմերի տարածքներով տարանցիկ տեղափոխումն իրականացվում է առաջնահերթության կարգով:

### **Հոդված 13**

1. Համատեղ խմբի գործունեությունն ավարտելուց հետո հարցնող Կողմի իրավասու մարմինը, Պլանին համապատասխան, ապահովում են համատեղ խմբի մեկնումն իր Կողմի տարածքից:

2. Համատեղ խմբի գործունեության վաղաժամկետ դադարեցումն իրականացվում է հարցնող Կողմի իրավասու մարմնի նախաձեռնությամբ, ինչի մասին համատեղ խմբի գործունեության ավարտի օրվանից 10 օր առաջ Համակարգող ծառայության միջոցով տեղեկացվում են դրա ձեւավորմանը մասնակցող՝ Կողմերի իրավասու մարմինները:

3. Համատեղ խմբի գործունեության ժամկետների երկարաձգումն իրականացվում է հարցնող Կողմի իրավասու մարմնի կրկնակի հարցման հիման վրա՝ սույն համաձայնագրին համապատասխան:

### **Հոդված 14**

Համակարգող ծառայությունը համատեղ խմբի գործունեության արդյունքներով հարցնող Կողմի իրավասու մարմնի հետ համատեղ 30 օրվա ընթացքում պատրաստում է տեղեկատվական վերլուծական նյութեր եւ դրանք ուղարկում է Կողմերի իրավասու մարմիններ:

## Հոդված 15

1. Իր գործունեության մեջ համատեղ խումբն առաջնորդվում է միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով, սույն համաձայնագրով, այլ միջազգային պայմանագրերով, որոնց մասնակիցներն են Կողմերը, ինչպես նաեւ հարցնող Կողմի օրենսդրությամբ:

2. Կողմերը հարգում են համատեղ խմբի իրավական վիճակը՝ միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին եւ նորմերին համապատասխան, թույլ չեն տալիս այնպիսի գործողություններ, որոնք դժվարացնում են համատեղ խմբի առջեւ դրված խնդիրների կատարումը, իրենց տարածքների սահմաններում ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ մասնագետների (փորձագետների) անվտանգությունը եւ պաշտպանությունն ապահովելու համար՝ ներառյալ նրանց նկատմամբ ցանկացած հակաիրավական արարքների կանխարգելման եւ կանխման միջոցները:

## Հոդված 16

Հարցնող Կողմը փոխհատուցում է վճարում համատեղ խմբի մասնագետներին (փորձագետներին), ղեկավարին եւ նրանց ընտանիքների անդամներին հատուցում է համատեղ խմբի գործունեության ժամանակահատվածում տեղի ունեցած վիրավորման, հաշմության կամ մահվան հետ կապված ծախսերը՝ իր օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ չափերով: Ընդ որում՝ նշված անձանց համար պահպանվում են հարցվող Կողմի օրենսդրությամբ սահմանված արտոնությունները, երաշխիքները եւ փոխհատուցումները:

## **Հոդված 17**

Հարցնող Կողմի տարածքում համատեղ խմբի գտնվելու հետ կապված իրավազրույթյան հարցերում Կողմերն առաջնորդվում են հետեւյալ սկզբունքներով՝

համատեղ խմբի մասնագետները (փորձագետները), ղեկավարն ազատվում են հարցնող Կողմի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ հենց հարցնող Կողմին վնաս պատճառելուն հանգեցրած՝ սույն համաձայնագրի շրջանակներում ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ (տեղակայման վայրերում գտնվելը, ընթանալը (ճանապարհին գտնվելը) դեպի նշված շրջանները (վայրերը) եւ հետադարձը, ինչպես նաեւ համատեղ խմբին վերաբերող խնդիրների կատարման վայրերում կատարվող գործողությունները) կատարված գործողությունների (անգործության) նկատմամբ իրավազրույթյունից.

ծառայողական պարտականությունների կատարման հետ չկապված պայմաններում՝ համատեղ խմբի մասնագետների (փորձագետների), ղեկավարի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ հենց հարցնող Կողմին պատճառված վնասը հատուցվում է ըստ շահագրգիռ Կողմերի միջեւ պայմանավորվածության.

հարցնող Կողմի իրավազրույթյունից համատեղ խմբի մասնագետների (փորձագետների), ղեկավարի անձեռնմխելիությունը չի ազատում նրանց իրենց Կողմի իրավազրույթյունից:

## **Հոդված 18**

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերից յուրաքանչյուրի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները:

## **Հոդված 19**

Կողմերի համաձայնությամբ՝ սույն համաձայնագրում կարող են կատարվել դրա անբաժանելի մասը կազմող փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագրի 21-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

## **Հոդված 20**

Սույն համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման ժամանակ Կողմերի միջեւ ծագող վիճելի հարցերը կարգավորվում են Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

## **Հոդված 21**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

## **Հոդված 22**

Ուժի մեջ մտնելուց հետո սույն Համաձայնագիրը բաց է Անկախ պետությունների համագործակցության ցանկացած մասնակից պետության կողմից միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով: Միացող պետության համար սույն Համաձայնագիրն ուժի

մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

### **Հոդված 23**

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալու սույն համաձայնագրից՝ ոչ ուշ, քան դուրս գալուց 6 ամիս առաջ այդպիսի մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին եւ կարգավորելով համաձայնագրի գործողության ընթացքում առաջացած ֆինանսական ու այլ պարտավորություններ:

Կատարված է Մինսկ քաղաքում, 2014 թվականի հոկտեմբերի 10-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ պետությունների համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության կողմից՝**

---

**Հայաստանի Հանրապետության կողմից՝**

*ստորագրություն*

**Բելառուսի Հանրապետության կողմից՝**

*ստորագրություն*

*(հայտարարությամբ)*

**Ղազախստանի Հանրապետության  
կողմից՝**

---

**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**

*ստորագրություն*

**Մոլդովայի Հանրապետության կողմից՝**

---

**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**

*ստորագրություն*

**Տաջիկստանի Հանրապետության  
կողմից՝**

*ստորագրություն*

**Թուրքմենստանի կողմից՝**

---

**Ուզբեկստանի Հանրապետության  
կողմից՝**

---

**Ուկրաինայի կողմից՝**

## Հայտարարություն

Բելառուսի Հանրապետության՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների արտաքին սահմաններում սահմանային անվտանգության սպառնալիքներին արագ արձագանքելու համար սահմանապահ գերատեսչությունների մասնագետների (փորձագետների) համատեղ խմբերի ձեւավորման եւ կիրառման կարգի մասին» համաձայնագրի մասին» Անկախ պետությունների համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի որոշման առնչությամբ

10 հոկտեմբերի 2014 թվականի

քաղ. Մինսկ

Բելառուսի Հանրապետությունը չի ուղարկում սահմանապահ եւ այլ զինվորական կազմավորումներ իր տարածքային սահմաններից դուրս՝ ճգնաժամային իրավիճակների շրջաններ:

Բելառուսի Հանրապետության

նախագահ՝

*[ստորագրություն]*

Ա.Գ. Լուկաշենկո



Սույնով հավաստում եմ, որ կից տեքստը 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկ քաղաքում կայացած՝ Անկախ պետությունների համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի նիստին ընդունված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների արտաքին սահմաններում սահմանային անվտանգության սպառնալիքներին արագ արձագանքելու համար սահմանապահ գերատեսչությունների մասնագետների (փորձագետների) համատեղ խմբերի ձեւավորման եւ կիրառման կարգի մասին» համաձայնագրի նույնական պատճենն է: Վերոհիշյալ համաձայնագրի բնօրինակը պահվում է Անկախ պետությունների համագործակցության գործադիր կոմիտեում:

Գործադիր կոմիտեի նախագահ –

ԱՊՀ գործադիր քարտուղարի

առաջին տեղակալ՝

*[կնիք ստորագրություն]*

Վ. Գառկուն